


ՀՈՌՈՍԻ ԳԱՂԱԿԱՆ ԹՆԴԱՆՈՅՆԵՐԸ

Հոռոս կղզւոյն մէջ մինչեւ ցայժմ կեցած են այն թնդանօթներն որ Գաղղիոյ Ֆրանսուա Ա թագաւորը յուղարկեր է ասկից 320 տարի առաջ Մալթայի ասպետաց մագիստրոսին: Նափուէոն կայսրը մօտեւս փափաք մը ցուցուցեր էր Վէլի փաշային, — Փարիզու օսմանեան դեսպանին, — որ այն թնդանօթները իրեն դարձուին, խոստանալով որ տեղը նոր թնդանօթներ կամ ուրիշ բան տայ: Աստիւլ-ազիզ արքայն՝ Գաղղիոյ կայսեր փափաքը լսելով՝ իսկոյն հրամայեր է որ այն թնդանօթները յուղար-



կուին Գաղղիա, ու անոնց տեղը ամենեւին բան մը չառնուի: — Որչափ որ գովելի է այս բանիս մէջ Գաղղիացւոց կայսեր ցուցուցած հայրենասիրութիւնն ու հնասիրութիւնը, նոյնչափ ալ գեղեցիկ է Օսմանեանց թագաւորին վեհանձնութիւնը, որ իրեն գերախոչակ նախնոյն՝ Գանուսի սուլդան Սիւլէյմանին դէմ անօգուտ տեղը գործածուած ու իւր ձեռքը գերիի պէս մնացած հրազէնքը՝ առանց փոխարէն մը ուզելու կղարծնէ Գաղղիոյ անաւանի թագաւորներէն մէկուն յաջորդին:

Հոս դրուած պատկերը, որ Հոռոսի մէկ ծովեզերեայ սրճարանն է, գուցէ արդէն ծանօթ է մեր ընթերցողաց: